

չտանիլ իր առողջութեանը: Մեր տունը զինքը տեսակ մը ոէժիմի տակ պահեր էինք, ու ինք վարժուեր էր չարաւոր խմել, մանաւանդ որ թոյլ էր Ռուսմանիոյ օղին, — «ցուիք» ըսուածը: Ի՞նչ պիտի ըլլար Սիւրբիոյ մէջ, ուր իրեն կը սպասէր Զահլէի թունդ օղին, ինչպէս ինքը կ'ըսէր:

Ճիշդ է, որ Սիւրբիան իր գերեզմանը չեղաւ, ու գնաց Եգիպտոս հողը մտնել: Բայց վախը սիրտս էր, երբ Սիւրբիոյ համար սկսաւ իր պատրաստութիւնները տեսնել: Ատկէ՛ էր զինքը խօսեցնելու մասնաւոր ճիգս, ինչպէս ատկէ՛ էր՝ քանի մը դրական էջեր անպատճառ աւարտել տալու մտահոգութիւնս իր մեկնելէն առաջ:

Գրան է այս բոլորը վերլիչել: Յիշելը թէ թուղթ-մատիտ առած նստեր ես բարեկամի մը գիմացը՝ մեռնելէ առաջ անոր վերջին կամքը լսելու համար: Ու յիշելը մանաւանդ, որ իր մեկնած գիշերը մոռայլ կանխազգացում մը պզտորներ է հոգիք: Զգացեր՝ թէ ալ չպիտի տեսնես զինքը, ու չես կրցեր զինքը մեկնելէ արգիլել: Ու յիշելը դարձեալ, թէ ի՞նչ սեւ նախազգացում էր մանաւանդ մեր շան ըրածը այդ գիշեր: Ի՞նչ բնազդական կասկած էր, որ Սեւ Աւօին, — այսպէս մ'իրտած էր Օտեան մեր շունը իր ծանօթ հերոսին անունով, — պահել, աննշմարելի ծակ մը խոթել տուաւ այն իրիկունը Օտեանի կալօջները, թերեւս թոյլ չտալու համար, որ ան մեկնի: Աւելորդապաշտութիւն դուցէ, բայց մարդ կը զգայ, որ իր սիրտը կը ճմլուի այդ բոլորը յիշելով: Սորհելով մանաւանդ, որ չես կրցեր արգիլել իր մահը, կամ գոնէ աւարտել տալ կարգ մը նիւթեր:

Աւելորդ չըլլայ յիշելը, թէ ան փորձեց քանիցս լրացնել իր դրական յիշատակները, զորս սկսեր էր «Ոստան»ի մէջ առնին: Ամսագիրը «Հայրենիք»ին պիտի դրկէր զանոնք, ու պիտի ջանար մինչեւ մեր օրերուն հասցնել: Ոչ իսկ սկսաւ, թէեւ ես իր կողմէ քանիցս խոստացայ «Հայրենիք»ի խմբագրին՝ թէ շուտով պիտի ստանայ Օտեանի դրական յիշատակներուն առաջին մասը: Սիւրբիա ու Եգիպտոս երթալէն յետոյ մէկը չունեցաւ, որ յամուէր զինքը դրդելու:

Օտեան, այսպէս, չլրացած ու չլրացուցած մեռաւ: Ճիշդ է, ան քանի մը դուռնա-դորձոցներ

պարգեւեց մեզի, բայց կիսատ թողուց իր դարուն տիպարները: Քանի մը հատը լրիւ տուաւ անոնցմէ, դասական դառնալու կոչուած հերոսներու վերածելով զանոնք: Բայց շատերն ալ ցրուեց վէպերու, թերթերու ու քրոնիկններու մէջ՝ առանց անոնցմէ ապրելու սահմանուած հերոսներ ստեղծադործելու: Ինքն ալ կը զգար թէ տակաւին լրացնելիք դործեր ունի, բայց ուժը կը պահուէր սկսելու: Կը վախնար որ կը մնայ կէս ճամբան առանց տիպարը ամբողջացնելու: Կը վախնար տիպարի տեղ ծագրանկարներ տալէ:

* * *

Աչքիս առջեւ ունիմ հիմա իրմէ քաղած նօթերս, երբ կը փորձեմ ուրուանկարը տալ այս էջերուն մէջ:

Բառ առ բառ չեմ արձանագրած բոլոր իր ըսածները: Անոնք ըսուած են յաճախ տարբեր առիթներով, ու ես միացուցած եմ զանոնք իմ նօթերուս մէջ: Ոմանք ալ եզրակացութիւնն են ու ամփոփումը երկար խօսակցութիւններու: Մանաւանդ ինչ որ նօթագրած եմ իր ներքին կեանքէն՝ քաղած եմ զաղտաղոյի, առանց իր ուղեղուն: Օտեանը ճանչցողները գիտեն, թէ ան չէր բանար իր սիրտը մէկուն, բան մը չէր պատմեր իր ներքին յուզումներէն:

ՆՕԹԵՐ ԻՐ ԿԵԱՆՔԷՆ

Դժուար է մարդու մը կեանքը դժել: Դժուար է զանել մէկու մը կեանքին բնորոշ գիծերը, ու անոնցմով կառուցանել ամբողջութիւն մը: Մարդ, ինք իսկ, կը դժուարանայ իր կեանքը պատմել: Ու երբ Օտեանէն նօթեր ուղեցի իր կեանքի մասին, հազիւ կ'մտնէր մը տընու թիւերու, դէպքերու եւ արկածներու: Մնացածը հագուելցնել կենսագրին գործն է, անոնցը, որ օր մը հեղինակը պիտի քննեն ու դատեն իր ատենուան մարդոց, դէպքերուն ու կեանքին հետ խառնելով զանիկա:

Իր տուած նօթերով ալ կը բաւականանամ ես: Իր ապագայ կենսագրին կ'իյնայ խօսեցնել զանոնք ու անոնց տալ իրենց իմաստը:

Օտեանի կեանքը, ինչպէս ինքը կ'ըսէր, եղած է տեսակ մը ժիւ Պլասի կեանք: Անցած է հազար արկածի ու հազար ասպարէզի մէջէն, ու թափառած անվերջ, առանց տեղ մը երկար կենալու:

Ծնած է 1869 սեպտ. 19-ին Պոլսոյ Եէնի-